ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վարդենիս **14/11/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 22 անդամներ:

Բացակա էին՝ Ռաֆայել Խչեյանը, Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը, Մուշեղ Շաբոյանը, Ջեմարա Վարդանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ահարոն Խաչատրյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի դրույթներով՝ հիմք ընդունելով <<Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության>> բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի բյուջեի սոցիալական ծախսերից 4729 հոդվածից տրամադրել դրամական աջակցություն Վարդենիս համայնքի անապահով բնակիչներ՝

1. Դավիթ Ավետիսյան /Վարդենիս/ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ

2. Սամվել Մանուկյան /Ակունք/ 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ

3. Արմենուհի Մարտիրոսյան /Սոթք/ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ

4. Էվելիկ Խաչատրյան /Վարդենիս/ 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ

5. Անժելիկա Թարվերդյան /Կարճաղբյուր/ 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ

6. Արմինե Թաթոյան /Արփունք/ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

7. Նվեր Բուդոյան /Վարդենիս/ 70000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ

8. Ռոզա Աբրահամյան /Վարդենիս/ 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ

9. Սոֆյա Մանուկյան /Ավազան/ 100000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ

10. Սուսաննա Գրիգորյան /Վանևան/20000 /քսան հազար/ ՀՀ դրամ

11. Սուսաննա Խաչատրյան /Նորակերտ/40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ

12. Մայրամիկ Գասպարյան /Կարճաղբյուր/ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

13. Դիանա Ավետիսյան /Վարդենիս/ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ դիմումները չափից շատ են և ավագանու քննարկմանն են ներկայացվում միայն խիստ անապահովներինը, մնացածինը բավարարվում են հնարավոր այլ օգնություններով: Համայնքի ղեկավարը առաջարկեց հաստատել հարցը համաձայն ցանկում ներկայացված թվերի, որոնց դիմումները ուսումնասիրվել են համապատասխան հանձնաժողովի կողմից: Սոցիալական աջակցություն տրամադրելու մասին հարցը դրվեց քվեարկության: Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 175-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԲԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է

1. Վարդենիս համայնքի Նորաբակ բնակավայրի բնակիչ Սամվել Մելքոնյանին պատկանող անշարժ գույքի գույքահարկի մասով կուտակված 8012/ութ հազար տասներկու/ ՀՀ դրամ տույժը օրենքով սահմանված կարգով զիջել՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարն առաջարկեց Վարդենիս համայնքի Նորաբակ բնակավայրի բնակիչ Սամվել Մելքոնյանին պատկանող անշարժ գույքի գույքահարկի մասով կուտակված ութ հազար տասներկու ՀՀ դրամ տույժը օրենքով սահմանված կարգով զիջել՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 174-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՆԵԼ ԱԼԵՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VOLKSWAGEN GOLF 1.8 15UU337 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի բնակիչ Գնել Ալեյանին պատկանող **VOLKSWAGEN GOLF 1.8 մակնիշի 15UU337** պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 118696/մեկ հարյուր տասնութ հազար վեց հարյուր իննսունվեց/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 28696/քսանութ հազար վեց հարյուր իննսունվեց/ ՀՀ դրամ տույժը և 10 տոկոս մայր գումարից՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարն առաջարկեց Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի բնակիչ Գնել Ալեյանին պատկանող **VOLKSWAGEN GOLF 1.8 մակնիշի 15UU337** պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի հարյուր տասնութ հազար վեց հարյուր ինսունվեց ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել քսանութ հազար վեց հարյուր ինսունվեց ՀՀ դրամ տույժը և 10 տոկոս մայր գումարից՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 173-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԶԱՎԵՆ ԶԻՐՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի բնակիչ Զավեն Զիրոյանին պատկանող անշարժ գույքի գույքահարկի մասով կուտակված 297623/երկու հարյուր ինսունյոթ հազար վեց հարյուր քսաներեք/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 100242/մեկ հարյուր հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ տույժը և մայր գումարից 15 տոկոս՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարն առաջարկեց Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի բնակիչ Զավեն Զիրոյանին պատկանող անշարժ գույքի գույքահարկի մասով կուտակված երկու հարյուր ինսունյոթ հազար վեց հարյուր քսաներեքՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել հարյուր հազար երկու հարյուր քառասուներկու ՀՀ դրամ տույժը և մայր գումարից 15 տոկոս՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 172-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՏԿԱՆՈՂVAZ 210653 ՄԱԿՆԻՇԻ 34UV593 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի բնակիչ Աշոտ Մանուկյանին պատկանող **VAZ 21065 1.8 մակնիշի 34UV593** պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 69803/վաթսունինը հազար ութ հարյուր երեք/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 12273/տասներկու հազար երկու հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ տույժը՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավարը և առաջարկեց Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի բնակիչ Աշոտ Մանուկյանին պատկանող **VAZ 21065 1.8 մակնիշի 34UV593** պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի վաթսունինը հազար ութ հարյուր երեք ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել տասներկու հազար երկու հարյուր յոթանասուներեք ՀՀ դրամ տույժը՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 171-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՓՈՒՆՔ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-019-0033-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ՝ ԳՅՈՒՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1,25646ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկ տեմբերի 29-ի N 1920-
Ն որոշմամբ, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օ րենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 06-ի թիվ 2/փ-421 եզրակացությունը համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական սահմաններում ընգրկված համայնքային սեփականություն հանդիսացող Արփունք բնակավայրի 05-019-0033-0001 ծածկագրով (Սեփականության իրավունքի վկայական N 25072024-05-0025) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 1,25646 հա հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը կրթահամալիր կառուցելու նպատակով փոփոխել՝ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը առաջարկեց ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական սահմաններում ընգրկված համայնքային սեփականություն հանդիսացող Արփունք բնակավայրի 05-019-0033-0001 ծածկագրով (Սեփականության իրավունքի վկայական N 25072024-05-0025) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 1,25646 հա հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը կրթահամալիր կառուցելու նպատակով փոփոխել՝ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, առկա է միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը:

Առաջարկություններ և առարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 170-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 67-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, Վարդենիս համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Սոթք բնակավայրի 1-ին փողոց 3-րդ նրբանցք 13 հասցեի (ծածկագիր 05-080-0021-0007, սեփականության իրավունքի վկայական16042024-05-0027) 0,1444հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասից առանձնացնել 0,10636 հա հողամաս և օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

2.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Ծովակ բնակավայրի 1-ին փողոց 18/2 հասցեի (ծածկագիր 05-051-0040-0021, սեփականության իրավունքի վկայական 25102024-05-0034) 0,00975հա բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

3. Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքով՝ 1քմ-ի համար 200 (երկու հարյուր) ՀՀ դրամ (15-րդ գոտի):

4. Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքով՝ 1քմ-ի համար 514,8 (հինգ հարյուր ՀՀ դրամ (16-րդ գոտի):

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը նշելով որ ՀՀ Կառավարության կողմից հաստատված սահմանամերձ բնակավայրերում բնակարանաշինության ծրագիրը շարունակվում է, որի շրջանակներում դիմել են շահառուներ՝ հողամաս ձեռք բերելու համար: Առաջարկում եմ տալ Ձեր համաձայնությունը՝ նախագծում ներկայացված հողամասերը առանձնացնելու աճուրդ-վաճառքով օտարելու համար, և մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքով՝ 1քմ-ի համար 200 (երկու հարյուր) (15-րդ գոտի):

Բյուջեի եկամտային մասն ապահովելու նպատակով առաջարկում եմ Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Ծովակ բնակավայրի 1-ին փողոց 18/2

հասցեի (ծածկագիր 05-051-0040-0021, սեփականության իրավունքի վկայական 25102024-05-0034) 0,00975 հա բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով՝ 1քմ-ի համար 514,8 (հինգ հարյուր ՀՀ դրամ (16-րդ գոտի):

Առաջարկություններ և առարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 169-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 42-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության Գեղարքունիքի մարզի դատախազության 2024 թվականի հոկտեմբերի 02-ի թիվ 61-980/24 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության իրավասու դատարան հարուցել համայնքային շահերի պաշտպանության հայց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Փոքր Մասրիկ բնակավայրի տարածքում գտնվող 225 հա հողատարածքը Նորայր Զաքարի Շահինյանին, Անահիտ Վոլոդյայի Մուրադյանին, Դերենիկ Զաքարի Շահինյանին, Հենրիկ Սերյոժայի Շահինյանին, Լևոն Խաչատուրի Մանասյանին, Ռոբերտ Անուշավանի Վարդանյանին և Սամվել Վեմիրի Մկրտչյանին վարձակալության տրամադրելու վերաբերյալ 2002 թվականի հունիսի 08-ին անցկացված մրցույթներն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ հիշյալ մրցույթների արդյունքում 2003 թվականի դեկտեմբերի 29-ին Գագիկ Սարոյանի և Նորայր Շահինյանի միջև կնքված 35հա հողամասի վարձակալության պայմանագիրը, 2006 թվականի ապրիլի 03-ին Գագիկ Սարոյանի և Անահիտ Մուրադյանի միջև կնքված 73,7 հա հողամասի վարձակալության պայմանագիրը, 2003 թվականի դեկտեմբերի 29-ին Գագիկ Սարոյանի և Դերենիկ Շահինյանի միջև կնքված 39,5 հա հողամասի վարձակալության պայմանագիրը, 2004 թվականի օգոստոսի 04-ին Գագիկ Սարոյանի և Հենրիխ Շահինյանի միջև կնքված 12 հա հողամասի վարձակալության պայմանագիրը, 2003 թվականի դեկտեմբերի 26-ին Գագիկ Սարոյանի և Լևոն Մանասյանի միջև կնքված 31,8 հա հողամասի վարձակալության պայմանագիրը, 2006 թվականի սեպտեմբերի 08-ին Գագիկ Սարոյանի և Ռոբերտ Վարդանյանի միջև կնքված 3 հա հողամասը վարձակալության հանձնելու մասին պայմանագիրն ու 2006 թվականի մայիսի 04-ին

Գագիկ Սարոյանի և Սամվել Մկրտչյանի միջև կնքված 30հա հողամասը վարձակալության հանձնելու մասին պայմանագիրն անվավեր ճանաչելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը, նշելով, որ Վարդենիս համայնքի Փոքր Մասրիկ գյուղի բնակիչների կողմից ՀՀ վարչապետին հասցեագրված դիմումի կապակցությամբ ոստիկանության Վարդենիսի բաժնում նյութեր են նախապատրաստվել, որոնց հիման վրա 2019 թվականի դեկտեմբերի 20-ին ոստիկանության Վարդենիսի բաժնում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի առաջին մասով հարուցվել է թիվ 31163419 քրեական գործը: Նախաքննություն կատարելու համար 2020 թվականի հունվարի 8-ին նշված քրեական գործը ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական բաժնի Վարդենիսի քննչական բաժին, ընդունվել է վարույթ և կատարվել է նախաքննություն:

Նշեմ, որ գործում նշված ժամանակահատվածում Փոքր Մասրիկի համայնքի ղեկավար /գյուղապետ/ է հանդիսացել Գագիկ Սեդրակի Սարոյանը:

Փոքր Մասրիկ գյուղի տարածքում գտնվող պետական պահուստային հողատեսքերը վարձակալության տալու համար 2001 թվականի մայիսի 10-ին ստեղծվել է մրցույթային հանձնաժողով, որի համաձայն հանձնաժողովի նախագահ է հանդիսացել Գագիկ Սեդրակի Սարոյանը:

2002 թվահանի հունիսի 8-ին անցկացվել է հողամասերը վարձակալության տրամադրելու վերաբերյալ մրցույթ՝ Փոքր Մասրիկ բնակավայրի տարածքում գտնվող 225 հա հողատարածք՝ տրամադրվել է թվով 7 քաղաքացիների: Քննության արդյունքում ապացուցված է համարվել և խախտվել են ՀՀ հողային օրենսգրքի պահանջները և ՀՀ Կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 41, 46, 47, 49, 50 և 55-րդ կետերի պահանջները:

Վարդենիսի համայնքապետարան գրություն է ստացվել ՀՀ դատախազության Գեղարքունիքի մարզի Դատախազությունից, որտեղ նշվում է, որ 2023 թվականի սեպտեմբերի 25-ին որոշում է կայացվել վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով թիվ 31163419 քրեական վարույթը կարճելու մասին:

ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ իր 2024 թվականի մայիսի 10-ի թիվ ՎԴ2/0250/05/23 որոշմամբ անդրադառնալով համայնքային շահերի հայց հարուցելու լիազորությանը՝ նշել է հետևյալը.

<<... երբ դատախազը իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերել է համայնքի ղեկավարի կողմից համայնքային շահերի խախտման փաստ, պարտավոր է հայց ներկայացնելու առաջարկությամբ դիմել համայնքի ավագանուն, քանի որ վերջինիս է վերապահված համայնքային շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելու առաջնային իրավասությունը: Եթե դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո համայնքի ավագանին ողջամիտ /մեկ ամիս/ ժամկետում հայց չի ներկայացրել դատարան, ապա միայն այդ

պայմաններում է դատախազությունը ձեռք բերում համայնքային շահերի պաշտպանության իրավունք:

Հարգելի ավագանիներ առաջարկում եմ տալ համաձայնություն՝ համայնքային շահերի պաշտպանության նպատակով դատարան ներկայացնել հայց վերոնշյալ 225 հա հողամասի կնքված պայմանագրերը անվավեր ճանաչելու և օրենքով սահմանված կարգով նորից վարձակալության տրամադրելու նպատակով:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 24 կող, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 168-Ա/

Լսեցին
2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 6-րդ և 25-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է

Համաձայնություն տալ 2025 թվականի ընթացքում Վարդենիս համայնքում նպատակային հետևյալ սուբվենցիոն ծրագերի իրականացումը՝

1. Վարդենիս քաղաքի 11 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում
2. Վարդենիս համայնքի Գեղամաբակ և Շատվան բնակավայրում խորքային հորերի կառուցում, Ակունք բնակավայրում ոռոգման համակարգի կառուցում, Կախակն բնակավայրում ոռոգման ներքին ցանցի կառուցում,
3. Վարդենիս համայնքի Գեղամասար և Նորաբակ բնակավայրերում ՕԿՋ-ի և կապտաժի կառուցում, Ակունք, Լուսակունք ու Ծովակ բնակավայրերում խմելու ջրի ներքին ցանցի կառուցում, Ազատ բնակավայրում ՕԿՋ-ի և արտաքին ցանցի կառուցում, Լճավան բնակավայրի խմելու ջրի ջրագծի արտաքին ցանցի կառուցում,
4. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի և Կութ, Ջաղացաձոր, Շատջրեք, Ծովակ, Տորֆավան, Այրք բնակավայրերի գերեզմանոցների ցանկապատում, Արցախյան պատերազմի զոհերի հիշատակի հուշահամալիրի կառուցում, Վարդենիս քաղաքի Լ. Ազգալդյան, Երիտասարդության և Վ. Մանուկյան խաչմերուկի պուրակի կառուցում, Վարդենիսի Գ. Կարապետյանի անվան զբոսայգու բարեկարգում, Վարդենիսի Սբ. Վարդան կոչվող տարածքի բարեկարգում,
5. Վարդենիս համայնքի Ծովակ, Լուսակունք, Լճավան և Նորակերտ բնակավայրերի մանկապարտեզների կապիտալ նորոգում,

6. Վարդենիս խոշորացված համայնքի Վարդենիս քաղաքի՝ Լ. Ազգալդյան, Երիտասարդության, Հ.Անդրեասյան, Իսակովի, Վ. Համբարձումյան-Վ. Մամիկոնյան-Գործարանային փողոցների ասֆալտապատում և Ակունք բնակավայրի Ս. Ավետիսյան և Բարեկամություն փողոցների և գերեզմանոց տանող ճանապարհի ասֆալտապատում, Դարանակ բնակավայրում երկու կամուրջների կառուցում, Շատջրեք բնակավայրի 3-րդ և 7-րդ փողոցների ասֆալտապատում,
7. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Երիտասարդության 2,3, 6, 11, 12, Լեռնագործների 1/1 և 1/2, Վ.Համբարձումյան 17 և 19, Արզոյան 2 բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի ասֆալտապատում:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ իր խոսքում նշելով, որ հիմք ընդունելով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ բնակավայրերի համաչափ զարգացումն ապահովելու համար առաջարկում եմ տալ Ձեր համաձայնությունը 2025 թվականի ընթացքում Վարդենիս համայնքում նպատակային հետևյալ սուբվենցիոն ծրագերի իրականացումը՝

1. Վարդենիս քաղաքի 11 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում
2. Վարդենիս համայնքի Գեղամաբակ և Շատվան բնակավայրում խորքային հորերի կառուցում, Ակունք բնակավայրում ոռոգման համակարգի կառուցում, Կախակն բնակավայրում ոռոգման ներքին ցանցի կառուցում,
3. Վարդենիս համայնքի Գեղամասար և Նորաբակ բնակավայրերում ՕԿՋ-ի և կապտաժի կառուցում, Ակունք, Լուսակունք ու Ծովակ բնակավայրերում խմելու ջրի ներքին ցանցի կառուցում, Ազատ բնակավայրում ՕԿՋ-ի և արտաքին ցանցի կառուցում, Լճավան բնակավայրի խմելու ջրի ջրագծի արտաքին ցանցի կառուցում,
4. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի և Կութ, Ջաղացաձոր, Շատջրեք, Ծովակ, Տորֆավան, Այրք բնակավայրերի գերեզմանոցների ցանկապատում, Արցախյան պատերազմի զոհերի հիշատակի հուշահամալիրի կառուցում, Վարդենիս քաղաքի Լ. Ազգալդյան, Երիտասարդության և Վ. Մանուկյան խաչմերուկի պուրակի կառուցում, Վարդենիսի Գ. Կարապետյանի անվան զբոսայգու բարեկարգում, Վարդենիսի Սբ. Վարդան կոչվող տարածքի բարեկարգում,
5. Վարդենիս համայնքի Ծովակ, Լուսակունք, Լճավան և Նորակերտ բնակավայրերի մանկապարտեզների կապիտալ նորոգում,
6. Վարդենիս խոշորացված համայնքի Վարդենիս քաղաքի՝ Լ. Ազգալդյան, Երիտասարդության, Հ.Անդրեասյան, Իսակովի, Վ. Համբարձումյան-Վ. Մամիկոնյան-Գործարանային փողոցների ասֆալտապատում և Ակունք բնակավայրի Ս. Ավետիսյան և Բարեկամություն փողոցների և գերեզմանոց տանող ճանապարհի ասֆալտապատում, Դարանակ բնակավայրում երկու կամուրջների կառուցում, Շատջրեք բնակավայրի 3-րդ և 7-րդ փողոցների ասֆալտապատում,
7. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Երիտասարդության 2,3, 6, 11, 12, Լեռնագործների 1/1 և 1/2, Վ.Համբարձումյան 17 և 19, Արզոյան 2 բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի ասֆալտապատում:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 167-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

Վարդենիս համայնքի 2024թ.համար հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2024 թվականի հուլիսի 22-ի <Պետական աջակցության գումարի տրամադրման վերաբերյալ> N 307-24 և 306-24 պայմանագրերում փոփոխություն կատարելու մասին համաձայնագրերի համաձայն,նախատեսել է Վարդենիս համայնքի հողօգտագործողներին գարնանացան գարու արտադրության խթանման համար՝ որպես պետական աջակցություն, տրամադրվելու է 121 756.7 հազ/դրամ դրամ, թույլատրել համայնքի ղեկավարին 2024թ-ի բյուջեի եկամտային մասը, այլ ոչ հարկային եկամտատեսակում, ավելացնել նշված գումարը, իսկ ծախսային մասում այն ավելացնել 04,02,01 գործառնական դասակարգման/գյուղատնտեսություն/ 4729 տնտեսագիտական հոդվածին:

2. Նկատի ունենալով այն հանգամանքը,որ 2024թ-ի ընթացքում համայնքապետարանի ավտոպարկը համալրվել է նոր ավտոմեքենաներով և մեքենաների ապահովագրության համար ծախսերը նախատեսված էին միայն առկա ավտոմեքենաների ապահովագրության համար ,ուստի պետք է ավելացնել վերոնշյալ ծախսերը և անհրաժեշտությունից ելնելով թույլատրել համայնքի ղեկավարին կառավարման ապարատի 01,01,01 51 գործառնական դասակարգման ապահովագրական ծախսեր 4215 տնտեսագիտական հոդվածին ավելացնելու 500.0 հազ.դրամ, այն պակասեցնելով նույն գործառնական դասակարգման 4251 տնեսագիտական դասակարգման հոդվածից:

3.Տորֆավան բնակավայրի գազի մատակարարման ներքին ցանցի շահագործումն ապահովելու նպատակով, թույլատրել համայնքի ղեկավարին կատարելու գազատար խողովակագծի փորձարկման ծառայության աշխատանքների գնում:

4.Թույլատրել համայնքի ղեկավարին ,Ալբանիայի Տիրանա քաղաքում ընթացած ըմբշամարտի աշխարհի՝ մինչև 23 տարեկանների առաջնության եզրափակչում Աշխարհի չեմպիոն հռչակված հունահռոմեական ոճի ըմբիշ, վարդենիսցի Հայկ Խլոյանին՝ որպես սպորտային պարգև, պարգևատրելու 500 000 դրամի չափով:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը նշելով՝

1.Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վարդենիս համայնքի հողօգտագործողներին գարնանացան գարու արտադրության խթանման համար՝ որպես պետական

աջակցություն, տրամադրվել է 121 միլիոն 756 հազար դրամ, թույլատրել համայնքի ղեկավարին 2024թ-ի բյուջեի եկամտային մասը, այլ ոչ հարկային եկամտատեսակում, ավելացնել նշված գումարը, իսկ ծախսային մասում այն ավելացնել 04,02,01 գործառնական դասակարգման/գյուղատնտեսություն/ 4729 տնտեսագիտական հոդվածին:

2.Ինչպես գիտեք 2024թ-ի ընթացքում համայնքապետարանի ավտոպարկը համալրվել է նոր ավտոմեքենաներով և մեքենաների ապահովագրության համար ծախսերը նախատեսված էին միայն առկա ավտոմեքենաների ապահովագրության համար ,ուստի պետք է ավելացնել վերոնշյալ ծախսերը և անհրաժեշտությունից ելնելով թույլատրել համայնքի ղեկավարին կառավարման ապարատի 01,01,01 51 գործառնական դասակարգման ապահովագրական ծախսեր 4215 տնտեսագիտական հոդվածին ավելացնելու 500 հազար դրամ, այն պակասեցնելով նույն գործառնական դասակարգման 4251 տնեսագիտական դասակարգման հոդվածից:

3.Հարգելի ավագանիներ Տորֆավան բնակավայրի գազի մատակարարման ներքին ցանցի շահագործումն ապահովելու նպատակով, թույլատրել համայնքի ղեկավարին կատարելու գազատար խողովակագծի փորձարկման ծառայության աշխատանքների գնում՝ շահագործման հանձնելու համար:

4.Համայնքի ղեկավարն առաջարկեց Ալբանիայի Տիրանա քաղաքում ընթացած ըմբշամարտի աշխարհի՝ մինչև 23 տարեկանների առաջնության եզրափակչում Աշխարհի չեմպիոն հռչակված հունահռոմեական ոճի ըմբիշ, վարդենիսցի Հայկ Խլոյանին՝ որպես սպորտային պարգև, պարգևատրելու 500 000 դրամի չափով,որին ի պատասխան առաջարկությամբ հանդես եկավ ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը: Առաջարկեց բյուջեում կատարել փոփոխություն՝ նախագծում ավելացնել 4-րդ կետ և դնել քվեարկության:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 166-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել՝ 2024 թվականի նոյեմբերի 14-ին, ժամը 14:00-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը՝ բաղկացած 10 հարցից.

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ՍՈԹՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՓՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-019-0033-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ՝ ԳՅՈՒՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1,25646ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՏԿԱՆՈՂVAZ 210653 ՄԱԿՆԻՇԻ 34UV593 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԶԱՎԵՆ ԶԻՐՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՆԵԼ ԱԼԵՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VOLKSWAGEN GOLF 1.8 15UU337 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԲԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024թ. նոյեմբերի 14-ին, ժամը 14:00-ին նշանակված ավագանու հերթական նիստը համարեց բացված: Նիստին ներկա են համայնքի ավագանու 27 անդամներից 22-ը: Բացակայում են <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը և Արտակ Մանուկյանը, հարգելի բացակայում են Ռաֆայել Խչեյանը, Մուշեղ Շաբոյանը և <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ավագանու անդամ Ջեմարա Վարդանյանը: Քվորումն ապահովված է: Նիստը իրավազոր է:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց նիստի օրակարգը՝ բաղկացած 10 հարցից:

Համայնքի ղեկավարը ընթերցեց օրակարգում ընդգրկված հարցերը՝ ըստ հերթականության:

Քվեարկության արդյունքում 22 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 165-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՋՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կամո Զարոյանը

_____